



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի  
օգնականների դասավանդման հմտությունների զարգացման  
ապահովում» ծրագիր

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Կոտայքի մարզի «Հացավանի Հ. Մանուկյանի անվ. միջն. դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Մայրենի

Թեմա՝ Ինքնուրույնության և մոտիվացիայի ձևավորումը կրտսեր դպրոցական  
տարիքում

Վերապատրաստող, մեներթը՝ Մելիք Մկրտչյան

Ուսուցիչ՝

Հեղինար Գրիգորյան

Երևան 2023

## Բովանդակություն

Ներածություն.....	3
<b>Գլուխ 1.</b> Ինքնուրույնության դերը կրտսեր դպրոցական տարիքում.....	4
<b>Գլուխ 2.</b> Մոտիվացիայի դերը ուսուցման գործընթացում: Ուսումնական մոտիվացիայի առանձնահատկությունները.....	8
Եզրակացություն.....	12
Օգտագործված գրականության ցանկ.....	14

## Ներածություն

**Թեմայի արդիականություն** - Ժամանակակից մանկավարժության մտքի որոնման արդյունքները հանգել են ուսման արդյունավետ մեթոդների, ձևերի, հնարների, միջոցների, ինքնուրույնության և մոտիվացիայի արմատավորմանը, որոնք մեծապես նպաստել են ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Այսօր անհրաժեշտ է թարմացնել, նորացնել, ժամանակի պահանջներին համահունչ դարձնել ուսուցման գործընթացում կիրառվող մեթոդները, հնարներն ու միջոցները: Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել կրտսեր դպրոցականների ինքնուրույնության և մոտիվացիայի ձևավորմանն ու զարգացմանը: Հենց դրանով է պայմանավորված քննարկվող թեմայի հրատապությունը, որը կակտիվացնի ուսուցման գործընթացը՝ բոլոր աշակերտներին ներգրավելով ուսումնական ստեղծագործական գործունեության մեջ՝ յուրաքանչյուրի հետ տանելով անհատական աշխատանք:

**Հետազոտության առարկան:** Ուսումնասիրությունների հիման վրա ուսուցման արդյունավետության ուղղությամբ ուսուցչի կողմից իրականացվող ինքնուրույնության և մոտիվացիայի ձևավորմանն ու զարգացմանն ուսումնասիրում, արդյունքների գիտամանկավարժական վերլուծություն:

**Հետազոտության հիմնական նպատակն է** ուսումնասիրել և վերլուծաբար ներկայացնել կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացից ինքնուրույնության ու մոտիվացիայի ձևավորումն ու զարգացումը:

Հետազոտության նպատակով, առարկայով, գիտական վարկածով պայմանավորված՝ առաջադրվել են հետևյալ **խնդիրները**՝

1. Փաստագրական նյութերի և այլ աղբյուրների ուսումնասիրության և դպրոցի պրակտիկ փորձի ընդհանրացման հիման վրա փորձել ցույց տալ կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում ինքնուրույնության և մոտիվացիայի ձևավորումն ու զարգացումը:
2. Գիտամանկավարժական վերլուծության ենթարկել ուսուցման գործընթացում ինքնուրույնության և մոտիվացիայի ձևավորմանն ու զարգացմանն ուսումնասիրումը կրտսեր դպրոցական տարիքում և ցույց տալ, որ տարիներ շարունակ մեր դպրոցներում, ուսուցման գործընթացում ձևավորվում է կրտսեր դպրոցականների ինքնուրույնությունը:
3. **Հետազոտության ծավալը և կառուցվածքը** - Աշխատանքը բաղկացած է ներածությունից, իրար հետ փոխկապակցված երկու գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

## Գլուխ 1. Ինքնուրույնության դերը կրտսեր դպրոցական տարիքում

Ուսուցումը աշակերտների կողմից սոցիալական, մշակութային փորձը, գիտելիքները, կարողությունները, հմտությունները յուրացնելու գործընթացն է, նրանց ինքնուրույնությունը լրիվ ապահովելու պայմանով:

Ինքնուրույն են կոչվում այն աշխատանքները, որոնք աշակերտները կատարում են ուսուցչի հանձնարարությամբ կամ սեփական նախաձեռնությամբ:

Հետազոտողները, խոսելով ուսումնական գործընթացի մասին, ավանդաբար ի նկատի են ունենում աշակերտի աշխատանքը դպրոցում: Բայց ուսումնական գործընթացի կազմակերպումը ընդգրկում է նաև նրա տնային և ինքնուրույն աշխատանքը:

Աշակերտի ինքնուրույն աշխատանքը ամենաքիչ ուսումնասիրված և ամենամեծ հետաքրքրություն ներկայացնող աշխատանքն է: Հենց այս աշխատանքում է առավելագույնս հանդես գալիս սովորողի մոտիվացիան, նպատակաուղղվածությունը, ինքնակազմակերպվածությունը, ինքնուրույնությունը, ինքնավերահսկումը: Ինքնուրույն աշխատանքի երեք հիմնական տարբերություններն են՝

1. Դրանց դպրոցականների մասնակցության կամավորությունը,
2. Անցկացման ոչ դասարանային ձևը,
3. Մեծ ինքնուրույնությունը:

Ինքնուրույն աշխատանքը բնորոշվում է

1. Դպրոցականի ինքնուրույն աշխատանքը դասի ժամանակ ուսումնական գործունեության ճիշտ կազմակերպման հետևանք է, որը խթանում է նրա ընդլայնումը, խորացումը և շարունակումը ազատ ժամանակ:
2. Դպրոցականի ինքնուրույն աշխատանքն ավելի լայն հասկացություն է, քան տնային աշխատանքը, այսինքն առաջադրանքների կատարումը, որոնք տվել է ուսուցիչը հաջորդ դասին պատրաստվելու համար:
3. Ինքնուրույն աշխատանքը պետք է դիտվի որպես ուսումնական գործընթացի հատուկ տեսակ, ինքնակրթության ձև:
4. Ինքնուրույն աշխատանքը պետք է գիտակցվի որպես ընտրականորեն ազատ ներքին մոտիվացված գործունեություն:

Ինքնուրույն աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջներն են՝

1. Արտադասարանական աշխատանքը կարող է միայն խորացնել, ընդլայնել և կատարելագործել դասի ժամանակ ստացված սովորողների գիտելիքները, կարողությունները, հմտությունները, բայց նպատակ չունի հաղորդել նոր գիտելիքներ, կարողություններ, հմտություններ:

2. Ինքնուրույն աշխատանքի ձևը, նյութը պետք է հետաքրքրաշարժ լինեն:
3. Պետք է պահպանել միջառարկայական կապերը:

Ինքնուրույն աշխատանքի հիմքում միշտ ընկած է սովորողի համար նոր նյութը, նոր ճանաչողական խնդիրները: Դպրոցականների ինքնուրույն աշխատանքը իրենից ներկայացնում է բազմակողմանի, բազմաֆունկցիոնալ երևույթ: Այն ունի ոչ միայն ուսումնական, այլև անձնական և հասարակական նշանակություն: Ինքնուրույն աշխատանքը դպրոցականի կողմից կազմակերպվող, նրա ներքին ճանաչողական դրդապատճառներին համապատասխան, իր տեսակետից իրեն ավելի հարմար ժամանակ կազմակերպվող, իր կողմից վերահսկվող գործունեություն է: Ինքնուրույն աշխատանքը պայմանավորված է սովորողի անհատական-հոգեբանական և անձնային առանձնահատկություններով: Այդպիսի հոգեբանական առանձնահատկություն է ինքնակարգավորումը: Սովորողների մոտ առաջին հերթին պետք է ձևավորված լինի իր հնարավորությունների մասին ամբողջական պատկերացումների համակարգը և դրանք իրականացնելու կարողությունը: Դպրոցականը պետք է ոչ միայն հասկանա ուսուցչի կողմից առաջարկված նպատակները, այլև ձևավորի դրանք ինքնուրույն, պահի մինչև իրականացնելը, չթողնի դրանց դուրս մղումը այլ հետաքրքիր նպատակների կողմից: Իսկ սովորողները ունա՞լ են ինքնուրույն աշխատանքի: Ինչպես ցույց են տվել հետազոտությունները, 45.5% ուսանողները խոստովանել են, որ չգիտեն ճիշտ կազմակերպել ինքնուրույն աշխատանքը, հարցվածների 65.8%-ը չեն կարող բաշխել իրենց ժամանակը, 85% չեն մտածում, որ այն կարելի է բաշխել: Ուսումնական ինֆորմացիայի ընդունումը, իմաստավորումը, մշակումը նրանց մոտ էական դժվարություններ է առաջացնում: Եթե սրանց ավելացնենք նաև ինքնուրույն աշխատանքին հոգեբանական անտարբերությունը, առաջադրվող գործողություններին չտիրապետելը, ճանաչողական հետաքրքրության և ուսումնական մոտիվացիայի բացակայությունը, հարցի պատասխանը կլինի բացասական: Այս խնդրի լուծումը իրենից ներկայացնում է մեծ պրոբլեմ ամբողջ դպրոցական և մանկավարժական կոլեկտիվի համար: Ինքնուրույն աշխատանքի ուսուցումը ընդգրկում է ուսումնական գործընթացի մոդելավորման եղանակների ձևավորումը, օպտիմալ օրվա ռեժիմի կազմումը, խորացված և դինամիկ (արագ) ընթերցանության եղանակների տիրապետումը, կոնսպեկտավորումը, ուսումնապրակտիկ խնդիրների կազմումը և լուծումը:

Որպեսզի սովորողները հմտանան ինքնուրույն մտավոր աշխատանք կատարելու մեջ, անհրաժեշտ է, որ սկզբնական փուլում դրանք իրագործվեն ուսուցչի ղեկավարության պայմաններում, իսկ հաջորդ փուլերում՝ ինքնուրույն

նախաձեռնությամբ: Սովորողների ինքնուրույն աշխատանքների կատարումները պետք է ունենան փաստերը, երևույթները, օրենքները, օրինաչափությունները ինքնուրույնաբար ճանաչելու, ստեղծագործական գործունեությունը զարգացնելու ուղղվածություն:

Որպեսզի սովորողները կատարեն ինքնուրույն աշխատանքներ, անհրաժեշտ է, որ նրանք ունենան իրենց գործողությունները, գործելակերպը հատուկ իրագործելու պատկերացում: Նրանք պետք է որոշակիորեն իմանան, թե ինչ աշխատանք են կատարելու, ինչ նպատակ է հետապնդում այն, ինչ խնդիրներ են լուծելու, երբ են սկսելու աշխատանքը, երբ են ավարտելու, ինչ մեթոդներ, հնարներ են կիրառելու, ինչպես են վերահսկելու սեփական աշխատանքի կատարումը, ինչպես են վերլուծելու ստացված արդյունքները և այլն:

Այդ ամենն իրականացնելու համար ցանկացած ինքնուրույն աշխատանք կատարելուց առաջ սովորողները պետք է ունենան օպերատիվ պլաններ, որտեղ արտացոլված լինեն, թե ինչը երբ կատարել, երբ ավարտել ու ամփոփել, արդյունքները ներկայացնել քննարկման:

Կան ինքնուրույն աշխատանքի տարբեր տեսակներ: Օրինակ.

1. Նոր գիտելիքներ ձեռք բերելու ինքնուրույն աշխատանք. այս դեպքում սովորողները ուսուցչի հանձնարարությամբ կամ սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրում են ուսումնական թեմաներին առընչվող համապատասխան լրացուցիչ գրականություն, կոնսպեկտավորում են այն գիտելիքները, որոնք չկան դասագրքերում: Իմաստավորում, ընդհանրացնում են ձեռք բերած նոր գիտելիքները և կիրառում պրակտիկայում:
2. Նոր կարողություններ ու հմտություններ ձեռք բերելու ինքնուրույն աշխատանք. նման աշխատանքները իրականացվում են ուսումնական կաթինետներում, լաբորատորիաներում, դպրոցի արհեստանոցներում, մարզադահլիճում: Սովորողներն ինքնուրույնաբար ծանոթանում են դիտազննական պարագաներին, ուսուցման տեխնիկական միջոցներին, ճանաչում գործիքները, սարքերը, մեքենաները: Իրենց մեջ մշակում են դրանք ճիշտ օգտագործելու կարողություններ ու հմտություններ: Լաբորատորիայում ուսուցչի ղեկավարությամբ կատարում են փորձեր, խորացնում են ձեռք բերած գիտելիքները, դրանք դարձնում ապացուցելի:
3. Ինքնուրույն ստեղծագործական աշխատանքները կատարվում են տարբեր ձևերով. օրինակ՝ աշակերտները տարբեր թեմաների շուրջ գրում են ստեղծագործական շարադրություններ, բանաստեղծություններ, պատմվածքներ, հեքիաթներ: Նկարում են, քանդակում են քարի կամ փայտի վրա, ծեփում-ներկում են և այլն: Դպրոցում

կազմակերպված արտադասարանային խմբակներում կատարելագործում են իրենց ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Սովորում են պարել, երգել, ասմունքել: Բեմականացնում են մանկական պիեսներ: Սովորողների յուրացրած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները լրիվ չափով ի հայտ բերվու նպատակով, դարոցում կազմակերպվում են ցերեկույթներ, համերգներ, ներկյացումներ և այլ աշխատանքներ:

Վերը նշված աշխատանքները, միջոցառումները ղեկավարում է ուսուցիչ-դաստիարակը, խորհուրդներ է տալիս, ժամանակին վերացնում է թերությունները, ուղղում սխալները, վերահսկում աշխատանքների ընթացքը և այլն:

## Գլուխ 2. Մոտիվացիայի դերը ուսուցման գործընթացում Ուսումնական մոտիվացիայի առանձնահատկությունները

Ուսումնական մոտիվացիան բնորոշվում է որպես մոտիվացիայի մասնավոր տեսակ: Ամենալայն առումով, մոտիվը (դրդապատճառը) այն է, ինչ որոշում է, խթանում, մղում անձին որևէ գործունեության կատարման: Ուսումնական մոտիվացիան (դրդապատճառների համակարգը) բնորոշվում է մի շարք գործոններով՝

1. այն որոշվում է կրթական համակարգով, կրթական հաստատությունով,
2. կրթական պրոցեսի կազմակերպմամբ,
3. սովորողի սուբյեկտիվ առանձնահատկություններով (տարիք, սեռ, ինտելեկտուալ զարգացվածություն, ընդունակություն, ինքնագնահատում),
4. մանկավարժի սուբյեկտիվ առանձնահատկություններով և առաջին հերթին իր վերաբերմունքով դեպի սովորողը, աշխատանքը,
5. ուսումնական առարկայի առանձնահատկություններով:

Ուսումնական մոտիվացիան համակարգված է և բնորոշվում է ուղղվածությամբ, կայունությամբ և դինամիկությամբ: Ուսումնական գործունեության մոտիվացիայի վերլուծման ժամանակ դժվար խնդիր է որոշել ոչ միայն դոմինանտող դրդապատճառը, այլև անձի մոտիվացիոն ոլորտի կառուցվածքի հաշվարկումը: Ա. Մարկովան ընդգծում է նրա կառուցման ենթակայությունը: Այսպես, նրա մեջ մտնում են՝ ուսանելու պահանջմունքը, ուսուցման իմաստը, ուսուցման դրդապատճառը, նպատակը, հույզերը, վերաբերմունքը և հետաքրքրությունը: Բնութագրելով հետաքրքրությունը որպես ուսումնական մոտիվացիայի բաղադրիչ, պետք է ուշադրություն դարձնել այն բանին, որ կենցաղում հաճախ «հետաքրքրություն» հասկացությունը օգտագործվում է որպես ուսումնական մոտիվացիայի հոմանիչ: Օրինակ՝ «նա ուսուցման նկատմամբ հետաքրքրություն չունի» կամ «պետք է զարգացնել իմացական հետաքրքրությունը»: Հետաքրքրության ստեղծման պայմանների կարևորությունը ուսուցչի, ուսուցման նկատմամբ և հետաքրքրության ձևավորումը նշվել է շատ հետազոտողների կողմից: Ուսուցման նկատմամբ հետաքրքրության ստեղծման նախադրյալ է հանդիսանում գործունեության սոցիալական դրդապատճառների դաստիարակումը, ինքնուրույնությունը և նախաձեռնությունը: Ինչքան ակտիվ են ուսումնական մեթոդները, այդքան հեշտ է հետաքրքրել սովորողներին: Ուսուցման նկատմամբ հետաքրքրության ձևավորման մեջ մեծ դեր է խաղում պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, սովորողների հանդիպումը դժվարությունների հետ, որոնք նրանք չեն կարող լուծել առանց գիտելիքների պաշարի: Դժվարությունների հանդիպելով՝ սովորողները համոզվում են նոր գիտելիքների ստացման



անհրաժեշտության մեջ: Հետաքրքիր է միայն այն աշխատանքը, որը պահանջում է մշտական լարվածություն, սակայն անհաղթահարելի դժվարության դեպքում հետաքրքրությունը անկում է ապրում: Հետաքրքրության առաջացման նախադրյալ է նաև նորույթը, սակայն այն պետք է անպայման հենվի սովորողների արդեն յուրացրած գիտելիքների վրա: Ուսումնական նյութի նկատմամբ հետաքրքրության ծագման կարևոր գործոն է ուսուցչի կենդանի խոսքը, նրա հուզական երանգը:

Ուսումնական գործունեությունն առաջին հերթին խթանվում է ներքին դրդապատճառով՝ իմացական պահանջմունքով, և արտաքին դրդապատճառներով՝ ինքնահաստատում, պարտք, անհրաժեշտություն, նվաճում: Աշակերտների ուսումնական գործընթացի հետազոտությունների հիման վրա ցույց է տրվել, որ ուսումնական գործընթացի մեջ մեծ է նվաճումների պահանջմունքի դերը: Այս պահանջմունքը ստիպում է աշակերտներին ավելի կենտրոնանալ ուսման վրա և միևնույն ժամանակ բարձրացնում է նրանց սոցիալական ակտիվությունը: Ինչպես նշել է Օռլովը «ակադեմիական հաջողության վրա մեծ ազդեցություն է գործում իմացական պահանջմունքի զուգակցումը նվաճումների պահանջմունքի հետ»: Կարևոր է նաև սովորողների վերաբերմունքը ուսուցման նկատմամբ: Այն կարող է լինել բացասական, չեզոք և դրական: Դրական վերաբերմունքը նշանակում է սովորողի պատրաստակամությունը դեպի ուսումը: Ուսումնական մոտիվացիան, հանդիսանալով մոտիվացիայի հատուկ տեսակ, բնութագրվում է բարդ կառուցվածքով, որի ձևերից մեկը ներքին (գործընթաց և արդյունք) և արտաքին (մրցանակ, փախուստ) մոտիվացիայի կառուցվածքն է: Էական են ուսումնական մոտիվացիայի այնպիսի բնութագրերը, ինչպիսիք են նրա կայունության, ինտելեկտուալ զարգացման և ուսումնական գործունեության բնույթի կապը:

Քանի որ դրդապատճառները գործունեությունն առաջացնում են ոչ անմիջականորեն, այլ իրենց ձևավորած նպատակների միջոցով, իսկ դա անտեսված է բոլոր հեղինակների կողմից, այսինքն, ինչպես ասվեց, դրդապատճառների հայեցակարգ մշակողները հաշվի չեն առել դրդապատճառի և նպատակի կապը, ուստի քննարկման առարկա պետք է դառնան գործունեությունն առաջացնող նպատակները, որը հնարավորություն կտա ստեղծելու մանկավարժական և ուսումնական գործունեության դրդապատճառների ու նպատակների հայեցակարգը, հետևաբար և նպատակահարույց ուսուցման տեսությունն ու պրակտիկան:

Դրդապատճառ և նպատակ: Ցանկացած նպատակադրում ունի իր պատճառը, այսինքն՝ միշտ էլ ինչ-որ պատճառ է մարդուն դրդում իր գործունեությունը ուղղել դեպի այս կամ այն նպատակը: Նշանակում է՝ մարդու գործունեության նպատակները հասկանալու համար անհրաժեշտ է պարզել այդ նպատակը ձևավորող դրդապատճառները: «Չիմանալով մոտիվների մասին չի կարելի հասկանալ, թե ինչու է մարդը ձգտում դեպի այս և ոչ թե այն

նպատակը, - գրում է Բ. Մ. Տեպլովը,- հետևաբար անհրաժեշտ է իմանալ նրա գործողությունների իսկական իմաստը»: Այդպիսի դիրքորոշումը դրդապատճառի և նպատակի հարաբերության նկատմամբ պահանջում է ցանկացած գործունեության դրդապատճառներն ու նպատակները ուսումնասիրել որոշակի հարաբերության մեջ: Սակայն հոգեբանության և մանկավարժության մեջ առկա համապատասխան հայեցակարգերը համարյա թե մեկուսացված են միմյանցից: Դրանք տարիներ շարունակ զարգանում են առանց որևէ կապերի, որպիսիք պետք է լինեն, քանի որ դրդապատճառն է առաջացնում նպատակը: Առ այսօր չկա որևէ հետազոտություն, որը այդ երկուսը դիտեր միասնության մեջ, բացահայտեր դրանց փոխկապակցվածությունն ու փոխալսմանավորվածությունը: Ուսուցման գործընթացի նպատակի հայեցակարգը համարյա թե չի բովանդակում որևէ գիտելիք այդ գործընթացի նպատակի, հետևաբար և այդ երկուսի հարաբերակցության մասին: Բնական է, որ նման պայմաններում երկու հայեցակարգն էլ կորցնում են իրենց ուժը և չեն կարող դառնալ արդյունավետ պրակտիկայի հիմք: Ահա թե ինչու հրատապ է դառնում լրացնելու այդ բացը և ստեղծելու գիտելիքների մի ամբողջական համակարգ ուսուցման գործընթացի սուբյեկտների դրդապատճառների և նպատակների մասին, որի ենթահամակարգերը կլինեն այդ երկու հայեցակարգերը, սակայն արդեն այլ բովանդակությամբ, քանզի այդ միավորումը անպայման լուրջ փոփոխություններ կկատարի դրանցից յուրաքանչյուրում: Նման միավորումը պետք է իր հիմքում ունենա իրական պատկերացումը գործունեության դրդապատճառի և նպատակի հարաբերակցության մասին: Ահա թե ինչու նախ պետք է պարզել այդ հարաբերակցությունը: Դա այնքան էլ դյուրին գործ չէ, քանզի գրականության մեջ չկա միանշանակ դիրքորոշում այս հարաբերակցության նկատմամբ: Որոշ հեղինակներ գրում են թե նպատակներն են ձևավորում դրդապատճառներ: Ոմանք էլ այն տեսակետն են զարգացնում համաձայն որի՝ դասի սկզբում պետք է հայտնել թեման, նպատակն ու խնդիրները, իսկ հետո արդեն ապահովել մոտիվացիան, քանի որ շփման նպատակը ստեղծում է իր մոտիվը: Որոշ չափով այսպես է մտածում և Ս. Լ. Ռուբինշտեյնը, երբ գրում է. «Մոտիվը՝ որպես որոշակի գործունեության գիտակցված դրդիչ, ձևավորվում է այն չափով, ինչ չափով որ մարդը հաշվի է առնում, գնահատում, ծանրութթև անում այն հանգամանքները, որոնց մեջ ինքը գտնվում է և գիտակցում է նպատակը, որը կանգնած է նրա առջև: Դրանց նկատմամբ մարդու ունեցած վերաբերմունքն էլ ծնում է մոտիվ»:

Գ. Ի. Շչուկինան ուղղակի պահանջում է նպատակը դարձնել մոտիվ: Հեղինակների մի ամբողջ խումբ համոզված է, որ նպատակն է ձևավորում մոտիվ, ուստի դասի ժամանակ պետք է աշակերտին ներկայացնել նպատակը, որից հետո ապահովել մոտիվացիան: Իհարկե, դասին նախապատրաստվելիս աշակերտական գործունեության

դաստիարակչական արդյունքը ապահովելու նպատակով անհրաժեշտ է որոշել այդ գործունեության աշակերտական նպատակը և հետո մտածել այդ նպատակը առաջացնող դրդապատճառների մասին, որպեսզի դասագործընթացում առաջանա դրդապատճառ, որն էլ ձևավորի սովորողի նպատակը տվյալ գործունեության համար: Երբեմն իրականությանը չի համապատասխանում այն պատկերացումը, թե սկզբում լինում է նպատակը, հետո միայն դրդապատճառը, կամ թե սկզբում աշակերտներին պետք է ներկայացնել իրենց դասի կամ նրա առանձին մասերի նպատակը, հետո միայն ապահովել մոտիվացիան: Այսպիսի դիրքորոշումը դրդապատճառի և նպատակի հարաբերակցության նկատմամբ հիմնավորվում է նախորդ շարադրանքով: Երբ օբյեկտը սուբյեկտի համար անձնային իմաստ է ստանում, այսինքն՝ արտացոլվում և գնահատվում է գիտակցության կողմից որպես իր համար անմիջական կամ միջնորդված նշանակություն ունեցող, ապա ձեռք է բերում դրդապատճառի հատկություն: Այդ գործընթացի ավարտից հետո արտացոլված օբյեկտը մարդուն հարկադրում է սկսել մի գործունեություն, որի նպատակն է նորից հանդիպել այդ օբյեկտին, վայելել այն, պաշտպանել կամ պահպանել և այլն: Ահա թե ինչպես է նկարագրում Պլուտարքոսը մի այսպիսի գործընթաց: Երբ Դեմոսթենեսը նախանձեց ճարտասան Կալիստրատեսի փառքին թողեց մնացած պարապմունքները և խաղերը, սկսեց ջանասիրաբար մարզվել ճարտասանության մեջ՝ հուսալով ժամանակի ընթացքում դառնալ իսկական հռետոր: Հոգեբանական գրականության մեջ կա մի տեսակետ դրդապատճառի և նպատակի հարաբերակցության մասին, որը չի արտացոլվել մանկավարժական գրականության մեջ: Ահա թե ինչ է գրում Ա. Ն. Լեոնտևը. «Որպեսզի հետաքրքրություն արթնացվի, անհրաժեշտ է ոչ թե նպատակը ցույց տալ, հետո միայն մոտիվացիոն տեսակետից արդարացնել տվյալ նպատակին ուղղված գործունեությունը, այլ պետք է ստեղծել մոտիվ, հետո բացահայտել նպատակը այս կամ այն առարկայական բովանդակության մեջ գտնելու հնարավորությունները»: Այսպիսի դիրքորոշում է դրսևորում և հետևյալ դատողությունում, որը պատկանում է այլ հոգեբանի «Մոտիվը այն է, ինչ մարդուն գործողության է մղում, իսկ նպատակը՝ ինչին որ նա ուզում է հասնել այդ գործողության շնորհիվ»:

## Եզրակացություն

1. Ինքնուրույն աշխատանքի հիմքում միշտ ընկած է սովորողի համար նոր նյութը, նոր ճանաչողական խնդիրները:

2. Մանկավարժական աշխատանքը անհրապակալի է առանց ստեղծագործական մոտեցման, եղածի թարմացման, արդիականացման ու կատարելագործման գործընթացի: Հետևաբար ստեղծագործաբար աշխատող ուսուցիչն ավելի արդյունավետ է աշխատում, բարձրացնում դասավանդման որակը, սովորողների մեջ ձևավորում ինքնուրույն որոնողական աշխատանք կատարելու կարողություններ, հմտություններ, ունակություններ:

3. Ինքնուրույն աշխատանքը իրենից ներկայացնում է բազմակողմանի, բազմաֆունկցիոնալ երևույթ: Այն ունի ոչ միայն ուսումնական, այլև անձնական և հասարակական նշանակություն: Ինքնուրույն աշխատանքը դպրոցականի կողմից կազմակերպվող, նրա ներքին ճանաչողական դրդապատճառներին համապատասխան, իր տեսակետից իրեն ավելի հարմար ժամանակ կազմակերպվող, իր կողմից վերահսկվող գործունեություն է:

4. Ինքնուրույն աշխատանքը պայմանավորված է սովորողի անհատական-հոգեբանական, անձնային առանձնահատկություններով: Որպեսզի սովորողները կատարեն ինքնուրույն աշխատանքներ, անհրաժեշտ է, որ նրանք ունենան իրենց գործողությունները, գործելակերպը հատուկ իրագործելու պատկերացում: Նրանք պետք է որոշակիորեն իմանան, թե ինչ աշխատանք են կատարելու, ինչ նպատակ է հետապնդում այն, ինչ խնդիրներ են լուծելու, երբ են սկսելու աշխատանքը, երբ են ավարտելու, ինչ մեթոդներ, հնարներ են կիրառելու, ինչպես են վերահսկելու սեփական աշխատանքի կատարումը, ինչպես են վերլուծելու ստացված արդյունքները:

5. Ինքնուրույնության կազմակերպման համար անհրաժեշտ է ճիշտ ընտրել և իրար զուգակցել ուսուցման մեթոդները, ղեկավարման չափանիշները: Շատ կարևոր է առաջնորդվել հետևյալ չափանիշներով, ուսուցման մեթոդները պետք է համապատասխանեն`

- ուսուցման սկզբունքներին,
- ուսուցման նպատակներին և խնդիրներին,
- տվյալ թեմայի բովանդակությանը,
- դպրոցականների ուսումնական և տարիքային հնարավորություններին,

- դասարանի կոլեկտիվի առանձնահատկություններին,
- առկա պայմաններին և ուսուցման համար հատկացված ժամանակին,
- ուսուցիչների հնարավորություններին:

Ուսումնական բուն գործունեության նկատմամբ հետաքրքրությունների հիմնական աղբյուրն ամենից առաջ նրա բովանդակությունն է: Որպեսզի բովանդակությունը հատկապես ուժեղ խթանող ազդեցություն ունենա, այն պետք է համապատասխանի մի ամբողջ շարք պահանջների, որոնք ձևակերպված են ուսուցման սկզբունքներում (գիտականությունը, կապը կյանքի հետ, սիստեմատիկությունն ու հաջորդականությունը, կրթական, դաստիարակչական, զարգացնող կոմպլեքսային ազդեցությունը և այլն):

Ընդհանրացնելով վերը շարադրված դրույթները՝ կարող ենք հանգել այն եզրակացության, որ փորձառու ուսուցիչը ուսուցումը դարձնում է հետաքրքիր, զարգացնում աշակերտների ակտիվությունն ու ինքնուրույնությունը՝ կիրառելով դասավանդման ակտիվ մեթոդներ, և ուսուցումը դարձնում է հետաքրքիր:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս., «Մանկավարժություն», «Մանկավարժ» հրատարակչություն, Երևան 2005, 256 էջ:
2. Ասատրյան Զ. Ա., «Անձնակողմնորոշիչ մոտեցման արդի խնդիրները ժամանակակից գնահատման համակարգում», Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն, Եր., «Զանգակ», 2009. հմ 8, 54 էջ:
3. Ասատրյան Զ. Ա., «Տարրական կրթության մանկավարժություն», Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2017, 160 էջ:
4. Ասատրյան Զ. Ա., «Կրտսեր դպրոցականների գնահատման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները»: Մխիթար Գոշ, Վանաձոր, 2008, հմ. 1, 75 էջ:
5. Ասատրյան Լ. Թ., և ուրիշներ «Կրթության համակարգի կառավարման հիմունքները», Եր., 2003, 223 էջ:
6. Ասատրյան Մ. Ա., «Դպրոցամուտը՝ սոցիալական նոր միջավայրին երեխայի հարմարվելու կենսափուլ», Մանկավարժություն, 2011, հմ. 7, 47 էջ:
7. Բաբանսկի Յու. Կ., «Մանկավարժություն», Երևան «Լույս» 1986 344 էջ:
8. Գյուլամիրյան Զ., «Ուսումնական ակտիվ գործունեություն ծավալելու կարողության առաջատար դերը տարրական կրթության համակարգում», «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, 2008, հմ. 2, 48 էջ:
9. Դալլաքյան Ա. Հ., «Մանկավարժական հաղորդակցումը որպես տարրական դասարանների ուսուցչի մասնագիտական կոմպետենտության հիմք». Մանկավարժական միտք, 2012, հմ. 3-4, 85 էջ:
10. Էլկոնին Դ. Բ., «Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն», Լույս հրատարակչություն, Եր., 1975, 104 էջ:
11. Էլոյան Տ. Ս., «Ուսուցիչը և նրա գործունեություն հոգեբանական առանձնահատկությունները», Եր., Լույս., 1980, 452 էջ:
12. Թորգոմյան Լ. Վ., «Մանկավարժության ընդհանուր հիմունքներ», Եր., Տոներ, 2005, 135 էջ:
13. Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., «Վեց տարեկան դպրոցականների մեկնարկը», 2006, 67 էջ:
14. Թունյան Զ. Ե., Երիցյան Լ.Ս., «Կրտսեր դպրոցականի հոգեբանություն», Եր., 2013, 287 էջ:

15. Լալայան Ա. Ա., «Դպրոցը և պրոֆեսիոնալ կողմնորոշումը», Եր., Լույս, 1977, 265 էջ:
16. Լիպկինա Ա. Խ., «Դպրոցականի ինքնագնահատումը», Եր., Լույս 1977, 331 էջ:
17. Լուկ Ա. Ն., «Սովորեցնել մտածել», Եր., Լույս 1977, 198 էջ:
18. Լուկյանով Յու. Ե., «Եթե Ձեր երեխան դժվարանում է սովորել», Եր., 1980, 241 էջ:
19. Խաչատրյան Հ. Վ., «Երեխայի դպրոցական կրթության նախապատրաստման մի շարք հարցեր»: Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ: Եր., 2008. հմ. 3, 54 էջ:
20. Կանցյան Լ. Հ., «Հետաքրքրությունների դաստիարակումը», Եր., Լույս, 1979, 263 էջ:
21. Կոմենսկի Յան Անոս, «Մեծ դիդակտիկա», Հայպետուսման կիրատ, Եր., 1962, 358 էջ:
22. Հակոբյան Գ. Հ., «Մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողների մասնագիտական կոմպենտենտությունների ձևավորման տեսական-մեթոդաբանական հարցեր», Մանկավարժական միտք, 2013, հմ 1-2, 36 էջ:
23. Հակոբյան Ն., Գևորգյան Ս., և ուրիշներ, «Մանկավարժական հաղորդակցում, ուսումնամեթոդական ձեռնարկ», հեղինակային հրատարակություն, Երևան, 2010, 202 էջ:
24. Հովհաննեսյան Ա., և ուրիշներ, «Համագործակցային ուսուցում», Եր., Անտարես 2006, 123 էջ:
25. Միքայելյան Լ. Ա., «Կրտսեր դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման տեխնոլոգիան», Եր., 2010 47 էջ:
- 26.
27. Մանուկյան Ս., «Մանկավարժագիտություն», «Զանգակ», Երևան 2002 456 էջ:
28. Սարգսյան Ա., «Երեխայի հոգեբանական պատրաստությունը դասին», Երևան, 2000, 308 էջ:
29. Վարդունյան Ս. Տ., «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ», Նոյան տապան, 2005, 405 էջ
30. Ուշինսկի Կ. Դ., «Մանկավարժական ընտիր երկեր», «Լույս» հրատարակչություն, Երևան 1981, 438 էջ:
31. Ֆարգադյան Հ. Ռ., «Սովորողների ստեղծագործական գործունեության կազմակերպումը դպրոցում»: Երևան, 2012, 79 էջ:
32. Леонтьев А. Н., Деятельность, сознание, личность, М., 1977, с. 297.

